

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ ԹԻՒ 35 28 ՕԳՈՍՏՈՍ 1904

ԲՈՎԱՆՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

Շարաքը. Տ. Ա. : — Միսի կարիքներ. Չիթի-ՍԱՐԱՑ. — Միսիուս համար (Բանաստեղծու-
թիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — Օրհորդ Լուիզ (Նորալիկ) ԱՐՄԷՆ ՉՐԱՔԵԱՆ : — Սեմ
Լուիի Արուեստահանգեսին առթիւ. Մ. Ո. : — Օսմանեան Գրականութիւն. «Պատուած քաւ-
կիցակը». ԽԱԼԻՏ ԶԻԱ ՊԵՅ քարմ. ՊԱՐԻՏ : — Խմբագրական նօթեր : — Զանգական :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շարաքերի, ծառիկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ԲԱՆԱՍԵՆ ՊՐԵ.
Եւ գաւառներուն համար յիսուն ՊՐԵ., կանխիկ վճարելի : Արեստահան 12 Ֆրանք կամ
5 ռուպլի : Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակելիքի ամէն շաբաթ առնու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան : Ժամանակ անցնելի վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուի : Եւ ինչպէս ի մատուցողութեան համար զոյգ
2 Խրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի : Եւ ինչպէս ի մատուցողութեան համար զոյգ

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով :

ՉԵՌՔԷ ԿՐ ԵԱԼՈՒԻ ԶՍՐ ԲԱՌՍՈՒՆ ԲԱՐԱՅԻ
Հասցէ

در علیّه غلطه (مسیس) فرتیسی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլս, Դալաթիա Galata, Constantinople

LA CONFIANCE



ՀԱՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԴԵՇԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդրօյիմ ներքեւ, երաշխաւորեալ դրամադուիս ունի՝ հրդեհի ճիւղին հաւար 56,000,000 ֆր:

ՀԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ զո՛ր ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հոն. բաժանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ՀԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վօսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժաքարիէի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները, Թրանսպիւանթիք, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Մովայիս Փոխադրութեան, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն, որոնք մեծ զորակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պօլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէոյիւք Երլտըզ խան, Թիւ 14, Հա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Դրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւխի վաճառատուն մը, Ծուկա, Սահաֆար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

ԿԵՆԱՅ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքնոն»-ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐՆԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԻՆԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՂՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիւներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքնոն ապահովագրողը ԶԵՐՄ է՝ այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bônéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելիի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրըք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան:—Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր

քաղաքաց մէջ

7—10



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒԵՒ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 16

Զբոսանքան աքառքման

Պալպալեան ամէն օր ազնայի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գրչերութեան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու յինած ազնայները: Ցորեկները ազնայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին եւմբէն կ'ախեալ է: Վկայեալ տառամտաւորութիւն Տիկին Բօլին եւս կը գանուի միշտ նոյն Գործակալութեան մէջ: Ազգացնեցուն ձրի 7—10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վ Կ Ա Յ Ե Ա Լ

ԻՐՈՒՆ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

ԵՒ

ՊԱՇԵՂԻԻ ԺԵՆՎԻ ԲՇԵՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Կը բուժէ ազնայի ամէն տեսակ ցաւեր

եւ լինտերու հիւանդութիւններ, կատարելագործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՕՆԷՒՂի մօտ Կլաւանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց ազնայ քաշելը ձրի է:

6—10

ՀԻՒՆԴՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՋՐ՝ ԶՅՐՈՒԹՅՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհասկացալի թիւներ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդը զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտմը կատարեալ առողջութեան հասցնէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Անիկայ թէ արորժակ կուտայ և թէ մար- սողութիւնը կը շտապէ: Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր զօրութեան զօրութիւն կուտայ: Ըագօթի Բաղադրութիւնը թէ կե- րակուր և թէ դեղ է: և տկարացած զրութեան մը կարօտ եղած միւս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ և ասոր անհամար օգտակար գործողութիւնները անուգիւ զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջէ զրութիւնը երբ միւս և զաւալ կը կորսնցնէ և հետեւապէս շուտմը աշխարհ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԹՐՈՒԹՅՈՒՆ

Ըրուր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ դժի վատնումը կը դադրեցնէ և առողջատես միւս կը կազմէ: Ընդ միշտ վարդադոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Բ.Լ.Ը.ԳԵԼԵԹԵԼԵՐ Ե ԳԵԼԵԼԵԹԵԼԵՐ ԻԸ ԻԸԻԸ:

Հիշեալ վրայ ստոր ուշա- գրութիւնն ընել պէտք է:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքուրեան և նորոգութեան (Դրասենեակ՝ Մահմուտ—փաշա, Թարազձը- լար, Մեծ Նոր Սանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած և փաշա թէ մետաք- սէ և թէ՛ բուրդէ տմէն տեսակ ընտիր գոր- գեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ և է արտա կամ հետք ձգելու: Ընդ- հակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ տառելութիւն մը նոր գոր- գերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցե- ցերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ արեւէ կերպով լուս- ուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պտրտասել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշկով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղղուին գրասենեակը:

Դիւրամտաչելի պայմաններ:

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն սեռակ քօհանիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Դիւրգէնիւրու դրան կից, Թ. 41—43

Նօյնպէս, արանց և կանանց ճաշկաւոր հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլ- թան—Համամ, Միաբլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թօհաֆիլէի վերաբերեալ և թէ՛ արանց ու կանանց յա- տակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տակաւնութիւն և դիւրամա- չելի գիններու տառելութիւնն ալ կ'ընծային հասարակութեան:

Աղամ Վարդեան մեծապէս դժ- թողացած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ ելլող տմէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն- ները եղանակին պէտքերը հազալու համար:

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 35

28 ՕԳՈՍՏՈՍ 1904

ՇԱՐԱԹԵՐ

Այն միջոցին ուր Սանասարեան վարժարանի խնամակալութիւնը կը հրատարակէ իր գործառնութեանց և այդ կրթական հաստատութեան քսանամեայ տեղեկագիրը, Վանայ երամեան վարժարանի հիմնադիր-տնօրէնն ալ կը հրատարակէ իր դպրոցին տեղեկագիրը: Առաջինին հաշուական մասը միլիոններու շուրջը կը դառնայ, երկրորդինը՝ քանի մը հարիւր ոսկիի, մէկը միւսը չի նսեմացնել սակայն:

Սանասարեան վարժարանը մեծանձն բարերարի մը առաջաձեռն կտակովը կառուցուած, յարատեւ կանոնաւորութեան մէջ է խնամակալութեան մը հսկողութեան ներքեւ որ հեռուէն կը հանդիսանայ խղճամիտ մատակարար և ուսումնասէր վարիչ, իրեն աջակից ունենալով տեղական Հոգաբարձութիւնը ու վարժարանին Տեսչութիւնը: Ամէն թերթ ամիսփութմը մը ըրաւ այդ ընդարձակ տեղեկագրի կարեւորագոյն մասերէն և քսանամեայ շրջանի միջոցին ձեռք բերուած կրթական ու արհեստական արդիւնքի մասին իր շնորհաւորանքի բաժինը նուիրեց խնամակալութեան որուն հոգածութիւնը ու աշխատանքը արժանի են ամէն գնահատման:

Քիչ մըն ալ զբաղելու համար նիւթական ոչ ամբան լայն պայմաններու մէջ գտնուող կրթական հաստատութեամբ մը, ինչպէս է Վանայ երամեան վարժարանը, առնենք անոր տեղեկագրին թուանշանները: Վերջացող տարեշրջանին մէջ, աշակերտներուն թիւը 187 էր, 44ը ձրիավարժ ըլլալով, որոնցմէ վեցը բարերար՝ երու որդեգիրներ են, իր անկի քան քսան տարուան գոյութեան միջոցին, այս վարժարանը հասուցած է 88

ընթացաւարտներ: 1903--904ին, ընդհանուր մուտքը կը հաշուի 23,900 դր. որուն 22,372 դր. թուականիէ գոյացած որ, դաւառային դպրոցի մը համար արհամարհելի գումար մը չէ՝ մինչ նոյն իսկ մայրաքաղաքի մէջ դպրոց յաճախող տղոց ծնողքներ կան որոնք կը վարանին ու կը դժկամակին համեստ թուակ մը վճարել կանոնաւորապէս: Ուսուցիչները, — ութը մնայուն և երկուքը այցելու, — ստացած են ընդամէնը 17,655 դր., միջին հաշուով իւրաքանչիւրը տարեկան 17 ոսկիի չափ, որ համեստագոյն վարձատրութիւնն է: Շէնքին վարձքը և ուրիշ ծախքեր զեղչելէ ետք, ելքին և մուտքին տարբերութիւնը կը մնայ 1527 դր. որ տեսչին միամեայ վարձքն է:

Եւ այս տեսուչը, Համբարձում երամեան, գիտէք որ միանգամայն հիմնադիրն է վարժարանին, աշագուրկ ուսուցիչ մը որուն յարատեւութեան ոգին, աշխատասիրութիւնը ու կրթական գործին նկատմամբ ունեցած անձնուիրութիւնը յիշուած են զանազան առիթներով, մանաւանդ վարժարանին յորելեանը տօնելու նախապատրաստութեանց առթիւ որուն արդիւնաւորութիւնը իր բարոյական և նիւթական վարձատրութիւնը պիտի ըլլայ:

Երամեան վարժարանին գոյութիւնը ու կանոնաւոր շարունակութիւնը կ'ապացուցանեն թէ համեստ միջոցներով ալ կարելի է վարել կրթական գործ մը, կը բաւէ որ այդ վարիչը կամք ունենայ, յոգնութենէ չի խուսափի և գիտնայ ինքզինքը սիրելի դարձնել: Երամեան էֆ.ն իր վրայ կը մարմնացնէ այս յատկութիւնները, ինչպէս պատմած են զինքը ճանչցողները և ինչպէս ցոյց կուտայ իր վար-

ժարանին արդիւնքը, և անոնք որ տրամադ-
րութիւն ունենան նպաստելու իր յոբելեա-
նին, գիտակից բարեբարութեան մը գոհա-
ցումը պիտի վայելեն:

Մկրտիչ Սանասարեանի, Յովհաննէս Կիւմ-
շեանի և Աստուածատուր Զունդի անուն-
ները ամէնէն աւելի յեղյեղուած անունները
եղան շաբթուս, մեր լրագրութեան մէջ:
Ահա՛ երեք ծերունիներ, յաջորդաբար
գերեզման իջած, որոնց իւրաքանչիւրը իր
ըմբռնած ուղղութեամբ բաժին մը թողած
էր իր հարստութեանէն՝ կրթական ու բարե-
գործական նպատակներու, և ամուրի կամ
անգաւակ մեռած ըլլալով՝ փափագած էին
ազգին տղաքը իրեն իրենցը նկատել: Առա-
ջինին կտակը քսանչորս տարուան արդիւնա-
ւորում մը ունի արդէն, գործադրութիւնը
սկսած ըլլալով իր կենդանութեանը. երկ-
րորդին մասին ղեռնոր համաձայնութիւն
գոյացաւ ժառանգորդներուն ու Պատրիար-
քարանի միջև. և երրորդը՝ գործադրութեան
երկրորդ շրջա՛ին մէջ է:

Մկրտիչ Սանասարեանը չի տեսաւ մեր
սերունդը, բայց ճանչցաւ զայն անունով,
կարգաց անոր կենսագրութիւնը ու կեանքին
զանազան դրուագները: Իր ահագին հարու-
տութեան մէջ՝ սակաւապէտ ու խնայասէր
անձ մըն էր. և անգամ մըն ալ միտքս կու-
գայ պատմութիւնը իր գուլպաներուն որոնց
հինցած մաշած ըլլալը կրք կը յիշեցնէր իր
հաւատարիմ սպասաւորը՝ Իլիան, ազա Մը-
կըրտիչ յօնքերը պոստելով կը յանձնարարէր
անոր որ «կարկտան ընէ»: Իր ներքին կեան-
քի այս մանրադէպը պատմողները կ'աւել-
ցնէին թէ, բարեգործ ծերունիին այս ըրա-
ծը ո՛չ թէ կծծիութիւն էր, այլ կրթութեան
գործին իր յատկացնելիք գումարէն, զոր
հանրութեան ստացուածքը կը նկատէր,
քանի մը բուպի չի պակսեցնելու համար:

Յովհաննէս Կիւմշեանը աչքերնուս առջև
է ղեռ, իր սպիտակափառ մօրուքովը, դող-
դոջուն քալուածքովը և յուշիկ խօսուած-
քովը: Ամենայետին մանրամասնութեանց
ուշադիր և խստապահանջ իր գործին գլու-

խը, իսկ ներքնապէս բարի ու հեղահամբոյր,
տիպար մըն էր ինքը կանոնաւորութեան,
ճշդապահութեան և սկզբունքի տէր մարդու:
Հանրային կեանքի մէջ, երեսադեմի պարտ-
քին հատուցման Յանձնաժողովին նուիրած
իր մեծ աշխատութենէն դուրս, ջերմապէս
փարած էր կտակային գործին՝ զոր կ'ուստոմ-
նասիրէր, և կուզէր նպաստակայարմար կարգ
ու կանոններ հաստատել Պատրիարքարանի
շրջանակին մէջ՝ իրեն անդամ Կտակաց
Յանձնաժողովին: Այդ թուականէն, իր գոր-
ծակիցները կը դուշակէին թէ Կիւմշեան կ'ըն-
ինքն ալ կտակ մը ընելու կը պատրաստուի:

Զունդ Ասպետը բոլորովին տարբեր խառ-
նուածք մը ունէր առաջին երկուքէն: Ատե-
նօք դասատու, յետոյ պահ մը վաճառական,
«գրոց աշակերտ» կրնար նկատուիլ: Երբ
ղինքը ճանչցանք, գործէ քալուած հասա-
ռու մըն էր արդէն, ու պերճ կեանք մը կը
վարէր. ձմեռը Բերայի մէջ ու ամառը Պէո-
յիւքտէրէ՝ Տ: և Տիկին Զունդի սրահները
հիւրընկալ յարկեր էին բարետոնմիկ ընտանիք-
ներու համար, որոնց մէջ յարգուած դէմք
մըն էր Տիկին Նեկտար Զունդ թէ՛ իր ընկե-
րային յատկութիւններովը և թէ՛ իր բարեգոր-
ծութիւններովը: Անոր մահէն ետքը, Զունդ-
եան տունը փակուեցաւ, և ծերունի սգաւոր
ամուսինը՝ իր երկու ճամբորդութիւններէ
վերադարձին՝ պանդոկի մը խցիկին մէջ ա-
ռանձնացած կ'ապրէր այստեղ, նախ ինք-
զինքը նուիրելով տղագիր յիշատակարանի
մը խմբագրութեան ու պապագրութեան, իր
կնոջ անուանը ձօնուած, և յետոյ իր կտա-
կին պատրաստութեանը որ այսօր կ'իրագոր-
ծուի:

Տ. Ա.

Տ. Եղիշէ եպիսկ. Դուբեան յաթուս
սկիզբը Պիլէճիկ ուղեւորեցաւ ուր առաջնորդ-
քին և թեմականներուն միջև ծագած ան-
համաձայնութեան մասին կարգադրութիւն
մը ընելէ ետք, Արմաշ պիտի վերադառնայ:
Դուբեան Սրբազանի Իզմիրի առաջնորդ
ընտրուելուն առթիւ, Դպրեվանքին խնամա-
կալութիւնը փափագ յայտնեց է Արմաշի
փոխ-վանահայրութեան և Դպրեվանքի վե-
րատեսչութեան պաշտօնին հրաւիրել Ման-
կունի Սրբազանը:

ՍԲՏԵԼՈՒՍ ԼԱՍԱՐ

ՕՐ. Ե. Է. ԻՌ

Էուրիւնըդ ֆայալոդ լուռ, ոսկեծղի
Բաղձանքներդ անքման,
Եթէ կըմաս, ինձի փոխ տուր. որպէսզի,
Քու տեղդ զանոնք ե՛ս ըզգամ:

Լոյսով ձուլուած երազանքներդ մըտերիմ,
Հոգիիս մէջ փոխադրէ
Որպէսզի ես քու անձիդ տեղ տառայիմ,
Ինքզինքն մոռցած գրեթէ:

Ինձի ցոյց տուր, ինչ որ կեանքիդ մէջ ունիս
Վիճ, հեծեծանք ու գոռով.
Սիրայօժար՝ պատրաստ եմ ես, սիրելի՛ս,
Քու տեղդ հասնի՛լ դաբերով:

Զմայլանքս՝ կը մեղգընամ մի՛տս քեզի.
Գէթ չըլլայի՛ մըտերիմ:
Դոյափոխուէ՛ հուրեման մէջ, որպէսզի,
Քու տեղդ միայն ե՛ս հիւծիմ:
ՍՄԱՌԻ ՅՈՎ. ԷԱՆՆԷՍԵԱՆ

ՅԱՋՈՂԱՆ ՈՒՍԱՆՈՂԱՆ

Վերջին տասնեակ տարիներու շրջանին
մէջ Եւրոպայի գիտական, բժշկական, ար-
ուեստական և ուրիշ բարձրագոյն վարժա-
րանները՝ յաջող հայ ուսանողներ ու շրջա-
նաւարտներ ունեցան, որոնք գնահատելի
ջանքերով շատ անգամներ իրենց կարգին
առաջինները հանդիսացան. ասոնցմէ էն աչ-
քառուն է Պ. Մաքսուտեան, Իզմիրցի երի-
տասարդը որ Բոնսէրվաթուարի այս տար-
ուան քննութեանց մէջ, առաջին մրցանակի
արժանացաւ ողբերգութեան և զօմէտիի դեր-
երուն մէջ: Ֆրանսայի թերթերը անկեղծ
գովասանքներ գրեցին և անոնցմէ մէկն ալ
գնահատական երկար յօդուածով մը՝ Պ.
Մաքսուտեանին լուսանկարը հրատարակեց:

Պ. Մաքսուտեան երկրորդ օտարականն է որ
Ֆրանսայի մէջ առաջին մրցանակին արժա-
նացաւ: Ասկէ գրեթէ 13-15 տարի առաջ
Max անունով Ռուսմանացի մը յաջողած էր
սոյն մրցանակը առնելու, և հիմայ հուշակա-
ւոր դերասան մըն է: Կը յուսանք Պ. Մաք-
սուտեանը Օտէոնէն վերջ, ուր ընդունուած
է այժմէն, Թէաթոն Ֆրանսէի բեմին վրայ
տեսնել: Յաջողութիւն ու քաջալերութիւն
երիտասարդ դերասանին:

*** Բանի որ առիթը ներկայացած է յա-
ջողածները թուելու, չեմ կրնար զանց ընել
ատամնաբոյժ Միհրան էֆ. Այանեանը որ
գրեթէ երկու տարի առաջ Բարիդի Ստամ-
բուլում ավան վարժարանէն շրջանաւարտ ել-
նելով, chirurgien-dentisteի վկայականը
ստանալէն վերջ իր արհեստը կատարելա-
գործելու համար մեծ հիւանդանոցները կը
մտնէ, ուր կը ծառայէ հուշակաւոր բրոֆէ-
սորներու որոնցմէ ոմանք իր ուսուցիչները
եղած էին և անոնց բարեացակամութիւնը
կը վայելէ:

Հիւանդանոցը ձգելէն յետոյ, թէպէտ իր
բրոֆէսէօրները կ'առաջարկէն ու կը խոս-
տանան յարմար պաշտօն մը գտնելու, սա-
կայն երիտասարդ ատամնաբոյժը իր երախ-
տագիտութիւնը յայտնելով անոնց, կ'իմա-
ցունէ թէ առանձին կերպով հաստատուելու
փափաք ունի: Եւ արդարեւ, Տոքթ. Այան-
եան կը յաջողի իր հաշուոյն հաստատուիլ, և
հիմայ գրեթէ տարիէ մը ի վեր շատ կոկիկ
կերպով installé եղած է և արդէն Բարիդի
հայ գաղութէն դատ, շատ մը ֆրանսացի
յաճախորդներ ունի:

Վերջերս հաճոյքով իմացանք որ Բարիդի
Օամ. դեսպան Վսեմ. Միւնիր փաշա գնա-
հատելով ատամնաբոյժ Այանեան էֆ. ի կա-
կարողութիւնը և արժանիքը, Բարիդի Օամ.
Դեսպանատան chirurgien-dentiste կար-
գեր է զայն: Զերմապէս կը շնորհաւորենք
ատամնաբոյժ Միհրան էֆ. Այանեանը իր
այս նոր պաշտօնին ու յաջողութեանցը համար:
Կ.

ՄԻՏՔԻ ԿԱԹՈԼԻԿՆԵՐ

Տարօրինակ հակասութիւնով մը, էրիկ մարդիկը ու սեռային յարաբերութիւնները արհամարհող կամ արհամարհել կեղծող կիներն են որ ամէնէն աւելի կը փնտռուին ու կը սիրուին էրիկ մարդերէն. օրինակ՝ Ֆէմինիսթ կիները: Ատիկա հրապոյր մը աւելի կը դնէ իրենց վրայ: Ո՞վ գիտէ, առանց ասոր Ֆէմինիզմը այնչափ ծաւալ դաժան չըլլար թերեւս այսօր: Եւ իրաւ ալ, էրիկ մարդու մը համար, կորովի ու հակառակորդ կին մը նուաճելը աւելի հաճելի է քան արդէն թոյլ վախկոտ ու տրամադիր կին մը իր կամքին ենթարկելը:

— Միօրինակութիւններուն մէջ, միեւնոյն ծովն է որ չի ձանձրացներ զիս:

— Յիշատակներն ալ մարդերու պէս են, կը քնանան ու կ'արթնան: Առանց ասոր պիտի չի կրնային երկար դիմանալ, ինչպէս որ մարդ մը առանց քունի չի կրնար ապրիլ երկարատեւ:

— Իսկատիւպութիւնը ռամիկին համար յախուռն բանի մը, այլանդակութեան հոմանիշ է:

— Ընդհանրապէս, ետքէն հարստացածներուն կեանքը կարելի է բաժնել երկու քի: Փարա չեն ունեցած, երբ կարողութիւնը ունէին զայն վայելելու. դրամի տէր եղած են, երբ այլ ևս զրկուած են զայն վայելու կարողութենէն:

— Կ'ըսեն թէ խօսիլը արծաթ է, լռելը ոսկի: Բայց ճիշդ տեղին, քաջայարմար խօսք մը զրուցել զիտնալն ալ ադամանդ ըլլալու է:

— Կը զարմանամ որ լեզուապայքարի ատեն աշխարհաբարեանները այնչափ սիրտ են հատուցեր, զիմացիներն համոզելու համար: Համոզել մէկը՝ որ բարի կամեցողութիւն չունի այնչափ որչափ անձնական շահ ու կանխակալ կարծիք ունի, բացարձակապէս անկարելի է: Ժամանակն է որ զինաթափ կ'ընէ ատանկները: Անանկ ալ բնաւ չեմ վրդովիր ու ջանք ըներ, տարհամոզելու համար *professionnel* բարոյախօսները որոնք այսօրուան իբր թէ մերկապարանոց գրականութիւնը կը հարուածեն: Ասոնք, ժամանակ անցնելով, իրենք իրենց կը սմբին, լեզունին կը քաշեն և պզտիկ մնացած ըլլալու դառնութիւնը աղէկ մը կրելէ ետքը կ'անհետանան անյիշատակ:

— Ատենով «անհաւատ» մակդիրը կը փակցնեն եղեր ամէն անոնց ճակատին որոնք իրենցմէ տարբեր կերպով խորհելու յանցանքը կը գործէին: Այսօր «անբարոյական» մակդիրը բռնած է անոր տեղը: Կ'երեւայ թէ ցեղային հին ունակութիւն մըն է անիկա, որ միտքերու լուսաւորութեան հետ կապ չունի:

— Բարոյախօս ըլլալը բարոյականի տէր ըլլալ չի նշանակէր, ինչպէս որ դերձակ ըլլալը անպատճառ մաքուր հագուիլ չենթադրեր: Ընդհակառակը, առած մը կայ որ կ'ըսէ թէ դերձակը իր վրան չի կարէր:

— Բռնի կերպով սրամիտ ըլլալու ջանքը, շատ չանցած մարդս բթամիտ կ'ընէ:

— Երգիծանիլը անդունդի մը եզրէն քաշելուն կը նմանի. ուր միշտ իյնալու վախ կայ: Այդ անդունդը՝ *grotesque*ն է:

— Մեր մէջ ամէն գրող սրամտութիւն փախցնելու բուռն մարմաջ մը ունի, բայց հակառակ ասոր, սրամիտները մատի վրայ է որ կը համրուին, մինչդեռ շատին ըրածը չուկայի անհոն՝ սաչմաներ քելէ տարբեր բան մը չէ:

— Մարդիկ կան որոնք խնդացնել կ'ուզեն և խնդալիք կ'ըլլան: Ամէն պարագայի մէջ, խնդալ մը կայ և այդ կը բաւէ իրենց պէս միամիտներուն պատրանք ու գոհացում պարգեւելու:

— Մեր մէջ ճշմարիտ տաղանդ մը արժանաւորապէս ճանչցուելու համար պէտք է կամ մեռած ըլլայ կամ օտարներէն զնահատուած: Նոյնիսկ մեռած ըլլալը այնչափ ապահով պայման մը չէ որչափ երկրորդը:

— Վերջօր Հիւկօ մը, Պալզաք մը, Զօլա մը, եթէ հայ ըլլային, պիտի չի կրնայինք համոզուիլ որ անոնք կրնան մենէ աւելի խելք ունենալ: Պիտի ծաղրէինք, պիտի քննադատէինք ու նոյն իսկ անոնց բան սորվեցնելու պիտի ելլայինք:

— Ատենէ մը ի վեր շատ յարգ գտած ու հետզհետէ տարածուող ունակութեան մը համեմատ, կարգ մը մարդիկ կը սիրեն, գրութեան մը մէջ, առանց անուն տալու, չարամիտ ակնարկութիւններ սահեցնել ասոր անոր վրայ: Ասիկա կը նմանի գաղտուկ ու պատասպարուած տեղէ մը անցորդներուն վրայ քարեր նետելու: Ասիկա անկեղծութեան պակաս ու վախկոտութիւն է միանգամայն, չըսելու համար ուրիշ բան:

— Հանրային գործերու մէջ գտնուող մը ուղէ չուղէ հարիւր հոգիի գործին պիտի իառնուի և հարիւր հոգիի ալ տեղի պիտի տայ որ իր գործին խառնուին: Երկու պարագայի մէջ ալ ատիկա անորոշելի բան մը չունի, ինծի համար մանաւանդ որ ազմուկէն ու բազմութենէն կը խորշիմ: Ա՛տ է պատճառը որ ինծի համար հրապարակագրութիւնը հրապոյր չունի, հակառակ անոր որ այդ ասպարէզը, եթէ պահէ իր բարձր նշանակութիւնը և ատանոց ապրանք մը չի դառնայ, ինչպէս եղած է մեր մէջ, հանրային գործունէութիւններուն ազնուագոյններէն մէկն է:

— Ամէն գրիչ բռնող մարդ բուռն փափաք ունի հրապարակ իյնալու և որովհետեւ ամէնէն դիւրին բանն է եկեղեցիի, վարժարանի, հիւանդանոցի վրայ խժրժանքներ յերիւրել, ահա հրապարակագիր կ'ըլլայ մէկ օրէն միւսը: Բարեբաղդաբար նոյնչափ դիւրին բան չէ նոյնիսկ միջակ գրագէտ մը, նկարիչ մը, երաժիշտ մը, վերջապէս արուեստագէտ մը ըլլալը:

— Հրապարակագիրը ուրիշին համար կը գրէ, գրագէտը՝ ինքզինքին համար: Առաջինը օգտակարը կը հետապնդէ, երկրորդը՝ դեղեցիկը: Այս սահմանումէն ետքը դիւրին է որոշել թէ ո՞րը, որչա՞փ պատասխանատու է իր գրածներուն համար:

— Կարգ մը դժուարահաս ու յուռետես մարդերու համար, յարատեւ ճամբորդութիւնը ճշմարիտ բարիք մըն է, ինչու որ երբոր առաջին անգամ տեղ մը կը հասնիս, նախ աղուոր կողմերը, փայլը, չպարը կը տեսնաս կը վայելես հաճոյքով և մինչև որ մարդկային անխուսափելի աղաւ, կեղտը, կեղծիքը երեւան գան, արդէն անդարձ մեկնած կ'ըլլաս անկէց:

— Խղճալի տգիտութեան արդիւնք է կարծելը որ վիպող մը անպատճառ ինքզինքն է որ կը նկարագրէ իր գրուածքներուն մէջ: Իսկ հեղինակին հերքումէն ետքն ալ սխալելու տարածայնելը՝ չարամտութեան վերջին բառն է:

— Ինչպէս որ խուլ-համբերուն ականջը անզգայ է որ և է ձայնի, չեն լսեր, անանկ ալ խուլ-համբ միտքեր կան, որոնք անկարելի են ամէնէն բացայայտ իրողութեան, ամէնէն խորտակիչ փաստի, չեն հպմողուիր: Երկուքին ալ հետը խօսիլը բացարձակապէս անօգուտ է և զուտ ժամավաճառութիւն:

— Յուսկնոտ միտքերը խաղամոլներու կը նմանին: Վերջ ի վերջոյ անանկութեան կը յանգին:

— Աւելի գէշ է մէկ բարեկամ մը որ volte-face կընէ, քան բազմաթիւ սկզբնական հակառակորդներ:

— Արհեստը միշտ օգտակարին է որ կը ձգտի: արուեստը՝ դեղեցիկին: Առաջինը անմիջական պէտք մըն է մարդու համար, երկրորդը՝ յաւիտենական:

ԶԻՅԹԻ-ԱՆՐԱՅ.

ՕՐԻՈՐԴ ԼՈՒԻԶ

(ՆՈՐԱՎ. Է. Գ)

Յիւրիս գտնուած միջոցիս, ամէն կիրակի կէս օրէ վերջ Գիթուիեան Բոյրերու Հիւանդանոցը կ'երթայի, ուր բարեկամներէս Արամը շաբաթներէ ի վեր փակուած կը մնար ստամոքսային հիւանդութեան մը պատճառով:

Մայիսի վերջերն էր. օր մը սովորական այցելութիւնս ըրի դարձեալ: Այս անգամ բարեկամս բաւական ապաքինած էր, այն պէս որ թոյլատրած էին իրեն՝ օրուան մէկ մասը պարտէզին տաղաւարներուն մէջ անցընել:

Երբ Հիւանդանոցի դռնէն ներս մտայ, Բոյրերը որ արդէն շատոնց գիտէին թէ ո՞ր ո՞ւ համար կուգամ՝ պարտէզին մէկ անկիւնը, մագլցող բոյսերով վարագուրուած պզտիկ pavillon մը ցոյց տուին ինծի:

Կէս ժամ կար որ միասին նստած էինք Արամին հետ՝ ես դուրսի կեանքէն և ինքն ալ իր անցեալէն պատմելով: Ու վայրկեան մը մեր գաղափարները ամփոփելու համար կարծես, երբ երկուքս ալ լուռ՝ դուրսը կը դիտէինք, նայուածքնիս յառած եղելիննէրու ծառուղիին երկայնքը, Բոյր մը անցաւ մեր առջեւէն՝ հազիւ երեք տարեկան սիրուն աղջնակի մը ձեռքէն բռնած:

—Այս պզտիկը ո՞վ է, գիտե՞ս, հարցոց բարեկամս յանկարծ:

—Ո՛չ, պատասխանեցի:

—Այդ աղջիկը մեր շատ սիրելի դասընկեր... Տէրոյեանին դուստրն է...:

Կարծեցի որ անպատճառ կատակ կ'ընէր. —Տէրոյեան բազմաբուռեատեան վարժարանին մէջ երկրագործութեան ճիւղին կը հետեւէր և տարիէ մը իր աւարտական քննութիւնս ները պիտի տար. հազիւ քսանըփինգ տարեկան կար և աղէկ գիտէի որ ամուսնացած չէր:

—Տէրոյեանին աղջիկն է, սիրելիս, Լուիզը, կրկնեց բարեկամս. մայրը մեռած է:

Որքան որ անհաւատալի ըլլար ինձ այս յայտնութիւնը՝ մտածեցի որ Արամ պատճառ մը չունէր այսպիսի անհեթեթ կատակ մը ընելու ինծի հետ: Խորհրդաւոր բան մը կար անշուշտ, որուն տեղեակ չէի ես դեռ: Արդէն իմ Յիւրիս գալս հազիւ մէկ ամիս կար և այդ կարճ ժամանակամիջոցին մէջ չէի կրնար իմ բոլոր ծանօթներուս անցեալը գիտնալ:

Միւս ընկերներուս մասին շատ պատմութիւններ լսած էի, որոնք կէս—ղաւեյտական, կէս—ողբերգական՝ իւրաքանչիւրին նկարագրին կը համապատասխանէին սքանչելիօրէն, բայց Տէրոյեանին նկատմամբ ցայտուն բան մը չէի գիտեր:

Սակայն այս երիտասարդին քով որ շատ սիրուած էր բոլորէս ալ, հոգեկան տառապանքներու ենթակայ մարդու մը նշանները կը տեսնէի ստէպ, ու իր դէմքին մեղամաղձոտ արտայայտութիւնը անցեալ տխուր դէպքի մը գոյութիւնը կը զգացնէր ինծի:

Իր զուարթ վայրկեաններուն՝ իրմէ աւելի սրամիտ ու զուարճախօս մէկը չկար մեր մէջ: Բայց այդ արամադրութիւնը երկար չէր տեսէր իր քով. անգամ մը որ մեր խօսակցութիւնները ողբերգութիւն և ծիծաղներն ու երգերը սկսէին իրարու յաջորդել, Տէրոյեան անկիւն մը կ'առանձնանար անզգալապէս և սիկառէթ մը չրթունքին՝ աչքերը կիսախուփ կը խոկար, մինչև որ մեղմէ մէկը նշմարելով զինքը այդ դիրքին մէջ, չի ձայնէր:

—Օհօ, Տէրոյեանը դարձեալ վերամբառնալ սկսաւ...:

Երբեմն կ'այցելէի իրեն՝ հինգերորդ յարկի իր սենեակին մէջ, որ խիստ պարզօրէն կ'ահաւորուած էր. —խեղճուկ մահճակալը մէկ անկիւնը, պատերու վրայ քանի մը լուսանկարներ, համալսարանի ընկերներէն նըւերուած: Պատահանին քով իր գրադարանը կար և քովն ալ գրասեղանը՝ ծանրաբեռնաւոր խոշոր գրքերով, որոնց ընթերցման մէջ խորասուզուած կը գտնէի միշտ Տէրոյեանը:

Ու անգամ մըն ալ աչքիս առջև պատկերացնելով մեր բարեկամին վարած եղական

կեանքը, կամաց կամաց կըսկսէի համոզուիլ Օր. Տէրոյեանի մը գոյութիւն ունենալու հաւանականութեան, և մինչ կը պատրաստուէի Արամին հարցումներ ուղղել այդ մասին՝ Գթութեան Գոյրը և սիրուն աղջիկը դարձեալ անցան մեր քովէն: Բարեկամս կանչեց.

— Լուի՛զ, հայրիկը եկա՛ւ այսօր:

— Ո՛հ, պատասխանեց պզտիկը, բայց պիտի գայ:

Գոյրը ետին դարձաւ, մեզ դիտեց ու ժպտեցաւ:

— Այս Գոյրն ու ես միայն գիտենք Լուիզին ծննդեան խորհրդաւոր պարադաները, ըսաւ Արամ հպարտութեամբ:

— Տէրոյեան չաբաթը երեք անգամ կը բացակայի իրիկուն դէմ և դադարի կը պահէ թէ ո՛ր կ'երթայ. արդեօք աղջկանը կ'այցեել, հարցուցի:

— Անշուշտ, և հիմայ պիտի համոզուիս ատոր:

Արդարեւ մէկ քառորդ ժամ հազիւ անցած էր որ մեր բարեկամը ներս մտաւ Հիւանդանոցի մեծ դռնէն և մանուկներու յարկաբաժինը ուղղուեցաւ:

— Հիմա դուրս պիտի ելնէ, նկատեց Արամ, դուռը գոցենք որ մեզ չտեսնէ:

Գիշ ետքը, Տէրոյեան դարձեալ երեւցաւ, այս անգամ Լուիզի ձեռքէն բռնած և զնաց նստիլ մեր աջ կողմը քիչ մը հեռուն շարուած նստարաններէն մէկուն վրայ:

Խարտեաչ սիրուն աղջիկը կը շատախօսէր Տէրոյեանի վիզէն կախուած: Երիտասարդը կը պատասխանէր անոր անհատնում հարցումներուն, կը դողար զգալի կերպով, ինչ որ ներքին սաստիկ յուզում մը կը բացատրէր:

Տասը վայրկեան վերջը Տէրոյեան Լուիզը գրկած՝ դէպի Հիւանդանոց ուղղուեցաւ և քիչ յետոյ տեսանք որ կը մեկնէր:

— Ա՛յ, կը հաւատաս ըսածիս, չէ՞, ըսաւ Արամ ձեռքը ուսիս վրայ դնելով: Եթէ դիտնայիր թէ ի՞նչ զոհողութիւններ կ'ընէ այս երիտասարդը Լուիզին համար... իր հօրմէն վեց ոսկի կըստանայ ամիսը և այդ գումարին գրեթէ կէսը աղջկանը համար կը ծախսէ: Ահա՛ թէ ինչո՛ւ այնքան խնայո՞

ղութիւն ընելու ստիպուած է, նոյն իսկ աղքատ կ'ապրի, բան մը զոր հարկաւ դիտած ես իր անշուք բնակարանէն և քաշուած կեանքէն:

Այդ պզտիկ աղջիկը իր մահն է ու միևնոյն ժամանակ իր հոգին: Մահը՝ որովհետեւ պտուղն է ան իր գործած մէկ սխալին, որուն ցաւալի հետեւանքները ահռելի ուրուականի մը պէս կը հալածեն զինքը՝ անդարմանելի խղճի խայթ մը պատճառելով իրեն: Կեանքը՝ զի Օր. Տէրոյեան թանկագին յիշատակ մըն է իրեն մնացած այն խորհրդաւոր գիշերէն, ուր խաւարի համեստ թեւերը քողարկած են սիրային աշխարհի ամէնէն արբշիտ տեսարաններէն մէկը...

Հակառակ բոլոր ջանքերուս Արամ չուզեց յայտնել ինձ խնդրոյն մանրամասնութիւնները, մինչև որ օր մը Տէրոյեան անձամբ պատմեց ինձ եղելութիւնը, երբ դիշեր մը թէյ կը խմէինք առանձին իր սենեակին մէջ:

*
*
*

Ասկէ չորս տարի առաջ երբ առաջին անգամ Յիւրիք եկայ, — այսպէս սկսաւ Տէրոյեան իր պատմութիւնը — բնաւ մէկը չէի ճանչնար այս մեծ քաղաքին մէջ: Մտածեցի տան մը մէջ pensionnaire ըլլալ և այդ նըպատակաւ համալսարանին գաւիթը պատերուն վրայ փակցուած ծանուցումները սկսայ կարդալ: Շատ մը մարդոց անունները կային հոն, որոնք ուսանողներու սենեակ վարձու կուտային: Անոնցմէ մէկին հասցէն նշանակելով՝ տունը տեսնելու գացի. — տանտիրուհին պտտցուց զիս բոլոր յարկաբաժինները և ես լճին վրայ նայող սենեակ մը ընտրեցի, որուն համար ամէն բան միասին ութսուն ֆրանք պիտի տայի ամիսը:

Այդ միեւնոյն տան մէջ քանի մը ուսանողներ կային արդէն, բոլորն ալ գերմանացի: Շաբաթ մը յետոյ ուսանողուհի մըն ալ եկաւ, ֆրանսացի մանկամարդ կին մը, որ բժշկուհի ըլլալու մարմաջէն բռնուած՝ լօզանէն Յիւրիք եկած էր իր ուսումը կատարելագործելու:

— Ա՛հ, գոչեցի, խնդիրը կը պարզուի կոր

հետգհետէ : Այս բժշկութիւն ուսանող կի-
ները արդէն ընդհանրապէս գեղեցիկ կ'ըլլան
և...

—Գեղեցիկ, այո՛, շատ գեղեցիկ էր այդ
կինը, բայց այն ատեն ե՛ս ալ գեղեցիկ էի.
վառվռուն աչքեր ունէի՝ որոնք մարեցան
սակայն և սև երկայն մաղեր, որոնց մէջ
արծաթ թելեր ինկած են հիմայ...

Իր ցեղին տաք արիւնը կրող այդ կնոջ՝
Տիկին Քառէլի հետ շոտով մտերմացանք.
սքանչելի դաշնակ կը զարնէր ու ես շութա-
կով կընկերանայի իրեն. յաճախ միասին
պտտելու կ'երթայինք Լճին եզերքը, կիրակի
օրեր նաւակ կը նստէինք կամ թանգարան-
ները կ'այցելէինք : Օր մըն ալ իր անցեալէն
պատմեց ինձ. — Ծնողքը շատոնց կորսնցող-
ցած էր, եղբայրը ամուսնացուցած էր զինքը
հարուստ բայց ցոխակեաց երիտասարդի մը
հետ, որ մեռած էր երկու տարի վերջը : Այն
օրէն բժշկուհի ըլլալ որոշած էր, աւելի աս-
պարէզի անունէ շլացած և քիչ մըն ալ ա-
զատ կեանք վարելու դիտումով : Ծեր հօ-
րեղբայրը կը կառավարէր հիմայ իր ստաց-
ուածքը և ամսական երկու հարիւր ֆրանք
կը զրկէր իրեն :

Գիշեր մը տիկին Քառէլ ու ես ուսանո-
ղական պարահանդէսի մը հրաւիրուած էինք :
Տիկինը շատ հաճոյք կը զգար որ միշտ ինձի
հետ պարէր առաջին վալսին :

—Գիտէք, կ'ըսէր, որ մեր յարաբերու-
թիւնները պիտի պաղին, եթէ ուրիշ կերպ
վարուիք :

Ասիկա իր եսասէր քմահաճոյքներէն մէկն
էր, որուն սակայն կը համակերպէի, իր դիւ-
րադգած ընտանոթիւնը չվիրաւորելու հա-
մար :

Սակայն այդ գիշեր պատուէրը մոռցայ :
Մինչ ես խօսակցութեան բռնուած էի հայ
օրիորդի մը հետ, — Լօզանի բարեկամուհիներ-
ընդ —, նուագախումբը սկսաւ ածել Ռօզաօի
վալսը, ու ես անքաղաքավար չգտնուելու
համար՝ խօսակցուհիս engager ըրի :

Տիկին Քառէլ չկար պարողներուն մէջ, —
ասիկա գէշ նշան մըն էր : Երբ վալսը վեր-
ջացաւ և պարուհիս իր տեղն առաջնորդեցի,

այն ատեն միայն տեսայ որ Տիկինը անկիւն
մը նստած ջղաձգօրէն իր հովահարը կը շար-
ժէր :

Մօտեցայ ներողութիւն խնդրելու, բայց
ոտքի ելաւ ան և առանց չքմեղանքս լսելու.

—Պաւլօ՛, ըսաւ ու դուրս գնաց :

Հետեւեալ առտուն նախաճաշի չիջաւ :
Պատճառը հարցուցի. — Հիւանդ է, ըսին :
Կէս օրին ու իրիկունը դարձեալ չեղեցաւ,
հասկցայ որ վշտացած էր և ինձմէ խոյս
կուտար : Քառէլ մը դրեցի իրեն և սպասու-
հիին ձեռքով զրկեցի, բայց պատասխան չի
դրեց :

Ընկերներս բոլորն ալ թատրոն դացին,
իսկ ես սենեակս ելնել ուղեցի շութակ զար-
նելու : Տիկին Քառէլի սենեակը լուսաւոր-
ուած էր, բայց ձայն չկար ներսը : Ուղեցի
երթալ անձամբ ներողութիւն խնդրել իրմէ
և բացատրել վարմունքս : Այդ նպատակաւ
դուռը բաղխեցի :

—Ո՛վ է ան, հարցուց :

Անունս տուի և իր արտօնութեան վրայ
ներս մտայ :

—Կը տեսնէք որ հաշտութեան առաջին
քայլը ես կառնեմ, ըսի :

—Օ՛հ, շատ աղնիւ էք, նստեցէք հոս,
ըսաւ, անկողնին քով թիկնաթոռ մը ցոյց
տալով :

Հիւանդ չէր, ապահովաբար : Գոյնը սքան-
չելի էր և սպասուհիին վկայութեան նայելով
ախորժակն ալ տեղը :

—Ես ձեզի համար աղդեցիկ դեղ մը
գտայ, ըսի :

—Ի՞նչ :

—Հիմայ կ'ելնէք կը հագուիք և մինչև
առաւօտ կը պարենք. վաղը կատարեալպէս
առողջացած պիտի ըլլաք :

Խնդաց, և իր արձանային մերկ թեւը
վերմակէն դուրս հանելով՝ ձեռքը ուսիս
վրայ դրաւ ու հարցուց.

—Ձեր նպատակը զիս վիրաւորել չէր,
այնպէս չէ՞ :

—Ս.մենեւին :

—Այն ատեն եկէք որ ձեր ականջին բան
մը ըսեմ :

Մօտեցայ, ան՝ կէս մը ընկողմանեցաւ բարձերուն վրայ և գլուխս կամաց մը իրեն քաշելով՝ ճակատս համբուրեց:

— Հաշտուեցանք, ըսաւ:

Այդ միեւնոյն գիշերը, բարեկամս, խենթութիւն մը ըրինք երկուքս ալ... խորհրդաւոր գիշեր, ուրկէ յիշատակ մը մնաց մեզի, աղջնակ մը, որու ծնունդէն չաբաթ մը վերջ մեռաւ սակայն Տիկին Բառէլ...

ԱՐՄԷՆ ԶՐԱՔԵԱՆ

ՍԷՆ—ԼՈՒԻԻ

ԱՆՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻԻ



Հնազիտական, ճարտարարուեստական և այլ հանգամանքներով ծանօթ այս Տիեզերական Յուցահանդէսին երկար սիւնակներ նուիրող թերթերու մէջ վերջերս խիստ հաճելի տպաւորութեան մը ասկէ՝ կարգալու առիթը ունեցայ կարգ մը անդեկութիւններ, որոնք հայ մտքին կամ տաղանդին համար որքան պատուաբեր՝ նոյնքան գնահատական ու քաջալերիչ կրնան նկատուիլ:

Չանց ընելով Արուեստահանդէսին միջազային ներկայացուցիչներուն վրայ զատ զատ խօսիլ, որոնք իրենց պատկանած երկրին ճարտարագործութիւնները — հին թէ նոր — յատկանշօրէն ցուցադրելու կոչուած են, մասնաւոր հաճոյքով մըն է որ պիտի ներկայացնեմ հոս, այս անգամ, պարսկական տաղաւարը, զոր կառուցանելու, չքեղօրէն յարգարելու և մեծարժէք աշարկանելով ու նմոյշներով ճոխացնելու գործը ա՛յնքան յաջողութեամբ գլուխ հանած են իրենց անունով ու համբաւով արդէն հանրածանօթ մէկ երկու հայ վաճառականներ:

Այս առթիւ շահեկանութենէ զուրկ չեմ համարիր հետեւեալ տնօրէնութիւնները հաղորդել որոնք քիչ թէ չատ պիտի կրնային գոհացնել ընթերցողին հետաքրքրութիւնը:

Նիւ — Յորքի պարսկական ընդհանուր հիւպատոս Տիգրան իման որ քսան տարիէ ի վեր մեծ ծառայութիւններ կը մատուցանէ Պարս-

կաստանի, ծանօթացնելով զայն և անոր արտագործութիւնները թէ՛ Եւրոպայի և թէ՛ Ամերիկայի, այս անգամ աւելի մեծ գործ մը կատարած է, որ արժանի է ամենուն դնահատութեան. այն է Սէն — Լուիի համալսարհային Յուցահանդէսին մէջ պարսկական տաղաւարի մը հաստատումը: Տիգրան իման և վաճառական — մեկենաս Տիար Յովհաննէս Ս. Թաւաճեան ընկերակցաբար իրենց անձնական ծախսով շինել տուած են այս սիրուն տաղաւարը, որ պարսկական ոճն ու գեղարուեստը ա՛յնքան փայլուն կերպով կը յատկանշէ: Տիգրան իման ընդհ. վերակացու նշանակուած է, և Տիար Թաւաճեան՝ վարիչ: Իսկ Սէն — Լուիի պարսկական փոխ — հիւպատոս Պ. Մ. Սերոբեան իր աջակցութիւնը նուիրած է տաղաւարին մէջի թանկագին ապրանքները ճոխացնելու համար:

Տիգրան իման ծանօթ է իբրեւ պատուաւոր վաճառական և իբրեւ բարեգործ անձնաւորութիւն: Դեռ երկու տարի առաջ ինքնաբերաբար դուժար մը նուիրեց Կ. Պոլիս Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին:

Սիրով կը յիշատակենք նաեւ թէ Տիգրան իմանի փոքր եղբայրը՝ Տիար Յովհաննէս վերջերս արժանացած է պարսկական Շիրու ինուրիտ պատուանշանի չորրորդ աստիճանին:

Դաւով Տաղաւարին, Վեհ. Շահը փափաքելով որ պարսիկ ոճով կառուցուի ան, ճարտարապետը ըստ այնմ շարժած է:

Պատերը ներկուած են գեղին յատակի վրայ փայլուն գոյներով. ծաղիկներ և ուրիշ նկարներ ալ գործածուած են, յատկանշող պարսիկ արուեստը: Շէնքը գրեթէ 100 × 50 ոտք է, և կը գտնուի Բաղմաղան Ճարտարարուեստներու հաստատութեան գաւիթներէն մէկուն մէջ:

Յուցահանդէսը կը բաղկանայ պարսկական անօթներէ, թանկագին թաւիչներէ և անեղնագործութիւններէ, հին պարսկական ձեռարուեստներէ, գորգերէ ինչպէս նաեւ Տիգրան իմանի անձնական հաւաքածոյէն որ կը պարունակէ հազուադիւր հնութիւններ, և որ ցուցադրուած էր Բարիզի 1889ի Ար-

ուհետաճանդէսին ատեն : Այս հաւաքածոն մասնաւորապէս յիշատակելի է իր թանկագին անօթներուն և ասեղնագործ առարկաներուն համար, առաջիններէն ոմանք 16րդ դարուն մէջ շինուած ըլլալով :

Պարսկական տաղաւարին ընդէ, արժէքը 200—250,000 ոսկի գնահատուած է :

Մ. Ո.

Յ. Գ. — Վերջերս լրագիրներու հետադրական բաժնին մէջ տրուած այն լուրը թէ Սէն-Լուիի արուեստաճանդէսին շէնքը թաթաւէ մը կործանած է, բոլորովին կը հերքուի :

ԹՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Իււլայի երկրորդ աստիճան շնորհուած է Վերաքննիչ ատեանի անդամներէն Թագուր էֆ. Համամճեանի և Միւթէմայիզի աստիճան՝ Կ. Պոլսոյ ծովային առեւտրական դատարանի անդամներէն Մարգար էֆ. Ունճեանի, կը շնորհաւորենք Համամճեան և Ունճեան էֆ. ներք՝ Կայսերական բարձր գնահատման արժանանալուն առթիւ :

Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Կայսրը բարեհաճած է երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել՝ Կայս. Գեղարուեստից Վարժարանին ներքին Տնօրէն Երուանդ Ոսկան էֆ. ի, — ճարտար արուեստագէտը ու տաղանդաւոր արձանագործը զոր կը շնորհաւորենք շնորհակալ :

Կայս. Բժշկական վարժարանի քաղաքային ճիւղէն այս տարի բժշկութեան և դեղագործութեան վկայական ստացած հայ ընթացաւարտներն են հետեւեալները : Բժիշկ. — Տօքթ. Աբէլ էֆ. Կիւլպէնկեան (Ամասիացի) որ Թալասի թաղապետական բժիշկ կարգուած է, Տօքթ. Պենոն էֆ. Պէղաղեան (Կ. Պոլսեցի) Գըրճալի (Լտիւրնէ) թաղապետական բժիշկ, և Տօքթ. Կարապետ էֆ. Տէմիրեան (Տիւրքալէքիլցի) Պողալլեանի (Եօղլատ)

թաղապետական բժիշկ. — Դեղագործ. Յակոբ Նարկիլէճեան, Դրիգոր Էքմէքճեան, Արմենակ Տէմիրճեան և Արսէն Միւնկիւճեան էֆ. ներք (Կ. Պոլսեցի). Աւետիս էֆ. Գուլամճեան (Երզնկացի) Դաւիթ էֆ. Ներսէսեան (Աֆիոն Դարահիսարցի), Յակոբ էֆ. Եաքօեան (Պարսիզակցի) և Նազարէթ էֆ. Պարոնեան (Պանտրմացի) :

Ինչպէս որ օրաթերթերը ծանուցին, Հոլանտայի Վիլհէլմինա թագուհին Օրանճ Նաւասօ պատուանշանին սպայութեան խաչը նուիրած է մայրաքաղաքիս հոլանտական դեսպանատան Ա. թարգման Պ. Մկրտիչ Կարապետեանի :

Պ. Կարապետեան բնիկ Իզմիրցի է և մօր կողմէ կը պատկանի Ապրօ դերդաստանին որուն անդամները աւելի քան մէկ դարէ ի վեր յաջորդաբար թարգմանի պաշտօն վարած են Իզմիրի հոլանտական հիւպատոսարանին մէջ ուսկից փոխադրուած է Պ. Մկրտիչ Կարապետեան Կ. Պոլսոյ հոլանտական դեսպանատունը ուր կարեւոր դիրք մը ունի իբրեւ առաջին թարգման : Պ. Կարապետեան վերջերս արժանացաւ Մէճիտիյէ պատուանշանին, ինչ որ հաւատարմութիւնն է թէ, թէ՛ Օսմ. Կայս. կառավարութեան բարձր համարումը կը վայելէ և թէ՛ Հոլանտական կառավարութեան կողմէ մեծապէս գնահատուած է իր պաշտօնավարութիւնը :

Բարեյիշատակ Յովհաննէս էֆ. Կիւմէնի կտակին վերաբերեալ բանակցութիւնները ու կարգադրութիւնները որոնք կը կատարուէին հանգուցելոյն ժառանգորդներուն և Ազգ. Պատրիարքարանի միջև, վերջնապէս աւարտեցան, Կիւմէնի ժառանգորդները ազգին կը թողուն 10,000 օսմ. ոսկիի անշարժ կալուած որ տարեկան մօտաւորապէս 1000 ոսկիի եկամուտ կ'ապահովէ՝ կրթարական ու բարեգործական նպատակներու յատկանալի : Այդ կալուածներուն փոխանցման սլաշտօնական գործողութիւնը կատարուեցաւ նախօրից շաբթուն :

Ջուռնալիս կտակին համաձայն Եւրոպական Համալսարան մը զրկուելիք ուսանողին վերջնական ընտրութիւնը կատարեց Յովսէփ Իգմիրեանց Գրական Յանձնաժողովը, որոշելով Կեդր. Վարժարանի այս տարւան յրջանաւարտներէն Պ. Երուանդ Նաղարեանը, Բաղէշցի, աղքատիկ ծնողաց զաւակ, Պ. Նաղարեան փափագ ունի մեքենագիտութիւն սորվիլ ֆրանսայի մէջ և կտակին տրամադրութեան համաձայն՝ իր ուսանողական յրջանի տեւողութեան միջոցին տարեկան 2000 ֆր. պիտի ստանայ իր ծախքերուն համար:

Հայէջիստանի մայրաքաղաքէն՝ Ատտիս— Ապապաէ Մանգումէի ուղղուած շահեկան թղթակցութեան մը մէջ կը կարդանք թէ այնտեղ հաստատուած Պաղտատցի Պօղոս անուն Հայը ոսկեհանքերու շահագործման արտօնութիւն ստացեր է Մենելիք կայսրէն: Պ. Պօղոս, որ արհեստով ոսկերիչ է, Հայէջիստանի ներսերը խուզարկութիւն մը կատարելով այս նպատակաւ, տասնըմէկ զանազան տեղեր ոսկեհանքի հետքեր գտեր և անոնցմէ նմոյշներ բերեր է իր հետ Ատտիս— Ապապա, մարմարի կտորներու և հողի հետ խառն: Իր խօսքին նայելով, Հայէջիստանի ոսկեհանքերու արտադրութիւնը Թրանսլալիններէն աւելի յարգի ու գերազանց պիտի ըլլայ: Մենելիք կայսրը ի մօտոյ Եւրոպա պիտի ղրկէ յիշեալ հայ ոսկերիչը, հարկ եղած մեքենաները գնելով վերադառնալու և ոսկեհանքերը շահագործելու համար:

Մասիսի այսօրուան թիւով կըսկսինք հրատարակել, իբրև նմոյշ մը ժամանակակից օսմ. գրականութեան, վիպակ մը Վսեմ. Խալիտ Զիա պէյի որուն նորավէպերու նորագոյն հատրէն թարգմանած է զայն մեր աշխատակիցը Պարէտ: Խալիտ Զիա պէյ, Բէթիի վարչութեան ընդհ. քարտուղարը, առաջնակարգ դիրք մը կը գրաւէ թուրք դրագէտներուն մէջ և իր վիպական գրութեաներով ու արձակ բանաստեղծութիւններով, որոնք հատորներու գեղեցիկ շարք մը կը կազմեն, մեծապէս գնահատուած է: Ինչպէս

կը յիշուի, վերջերս Արեւելի մէջ ուսումնասիրութիւն մը հրատարակեց Պարէտ՝ Խալիտ Զիա պէյի գործերուն վրայ:

Ներկայ վիպակը, Պատուած քաւիքնակը, պիտի աւարտի երեք անգամէն, Մասիսի 37րդ թիւով:

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԲԱՆԱԿԱԼ ԹԻ

48րդ ՏԱՐՆԵՐՁԱՆ

Վարժարանս վերստին կը բացուի 1/14 սեպտ. 1904:

Վարժարանս ունի արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne Realschule) Ծրագիրը՝ միջ-վարիս պիտոյիցը, Իմաստցուած:

Լեզուներ. — Հայերէն, Թուրքերէն, Գաղղիերէն, Գերմաներէն, Անգլիերէն:

Գիտութիւններ. — Ուսող-կան, բնագիտական, բնապատմական, պատմական, (գ'աւանդուի՝ Գաղղ. եւ Գերմ. լեզուներով):

Առեւտրական Աշխարհագր. Թուրքերէն. Թղթակցութիւն (Գերմ. Գաղղ. Անգլիերէն):

Ուսման ժամանակ. — Ներքին եւ արտ. քին՝ 20 ուսուցիչներ պիտի դասախօսեն: Նարմալ աշակերտաց ընդունելութիւնն Օգոստ. 16էն կը սկսի:

Վ.Ս.Ի.Զ

Հ. ԳՍԲԻԷԼ Ծ. Վ. ՄԵՆԷՎԻՇԱՆ

4 — 10

ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԲԱՐԻՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ տղայոց հիւանդութիւններ (ներքին հիւանդութիւններ և վիրաբույժութիւն), կը կատարէ քթի, ախաշի և կոկորդի գործողութիւններ:

Ներքալքի, չորքալքի, ուրբաթ և չաքաթ Բերա, Մեծ—փոքր Բրէտի Լիոնէի քով, թիւ 331:

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12.

3 — 10

ԽԱՍԳԻՒՂԻ Ներսէսեան երկսեռ վարժարանին վերաշինութիւնը արտօնող Կայս. Պէրաթը շնորհուած ըլլալով, շարժուած մէջ յանձնուեցաւ Պատրիարքարանի:

* * Ս. Պատրիարքը՝ ընկերակցութեամբ Բարթող էֆ. Թէլեանի՝ չորեքշաբթի օրը իմացիւղ երթալով աչքէ անցուց Գալֆաեան Որբանոցը ուր կը գտնուէին արդէն ինամակալուհի Տիկիները, Եղուարդ էֆ. Գարակէօզեան և շինութեան Յանձնաժողովին միւս անդամները: Ս. Պատրիարքը ներկաներուն հետ խորհրդակցելով, յիշատակարաններու ձեւը ու զետեղման տեղերը որոշեց:—Յովհաննէս էֆ. Թալշանճեան ինքնաբերաբար 50 ոսկի նուէր ղրկեք է՝ Գալֆաեան Որբանոցի կահաւորման ծախքերուն յատկացուելու համար:

Գաղղիւղի Մխիթարեան վարժարանը, որ 1903-1904 դպրոցական տարեշրջանը բոլորեց Հ. Յովհաննէս Վրդ. Թորոսեանի ձեռնհաս տեսչութեան ներքեւ, որուն արդիւնքները տեսնուեցան ամալեղջի հանդէսին առթիւ, կը պատրաստուի վերաբացուիլ լաւագոյն պայմաններու մէջ: Վարժարանին ուսումնական վիճակին հետ՝ տեսչութիւնը նկատողութեան առած ըլլալով նաեւ աշակերտներուն հանգստաւէտութիւնը և ուրիշ նիւթական տեսակէտներ, հիմնական նորոգութիւն մը կրել տուած է չէնքին որ Մօտայի գեղատեսիլ դարաւանդին վրայ կառուցուած գեղեցիկ ու առողջարար դիրք մը ունի արդէն, և կատարուած նորոգութիւնները աւելի հաճելի պիտի դարձնեն զայն այսուհետեւ:

Գաղղիւղի Մխիթարեան վարժարանը, իր կրթական առաջնակարգ հաստատութեան համբաւը աւելի ևս կ'արդարացնէ՝ Հ. Յովհաննէս Վրդ. Թորոսեանի նման ներհուն, ծանրախոհ և դպրոցական գործէ հասկցող տեսչի մը ուղղութեան ներքեւ որուն կ'աջակցի Հ. Վարդան Վրդ. Հացունի որ ո՛չ միայն կը դասախօսէ վարժարանին մէջ, այլ նաեւ մեծագոյն բաժին մը ունի վարչական ու մատակարարական գործին մէջ: Ոչ նուազ կարող և ուսումնական Մխիթարեան Հայրեր կը պաշտօնավարեն հոն, ուսուցիչներու լաւագոյն խումբի մը հետ, կատարելապէս դոհացնելով այն բոլոր ծնողքները որոնք անոնց խնամքին կը վստահին իրենց

զաւակները: Գիշերօթիկներու թիւը, որ նախը տարին 80 էր, աւելնալու վրայ է, ինչ որ իրական գնահատում մըն է Հ. Թորոսեանի տեսչական ջանքերուն եւ ուսումնական կարողութեանը:

ԱՂԶԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԵԱ

(Ի Ի Ս Կ Ի Ի Տ Ա Ր)

Աղջկանց Ամերիկեան Գոլէճի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի սեպտ. 15ին: Գիշերօթիկ աշակերտուհիները Գոլէճ կը սպասուին 14ին: Հաստատութեան չէնքերն օժտուեցան կեդրոնական ջեռուցիչով մը, որ մեծապէս կը նպաստէ գիշերօթիկներու վիճակին հանգստաւէտութեան: Ուրիշ բարեօրոգումներ ալ պիտի ըլլան տարւոյն ընթացքին մէջ: Աւելի տեղեկութիւն ուղղուեց ղիմելու եւ նամակով Գոլէճին նախագահին, կամ Սեպտ. 1էն ետքը անձամբ երթալու եւ Գոլէճ: Կը խնդրուի նամակները ղրկել անգլ. նամակատան խնամքով:

5—10

Գ Ա Տ Ը Գ Ի Ի Ղ Ի

ՄԵՆԹԱՐԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԸ

Կը բացուի սեպտեմբեր 6/19ին: Ունի մէկ տարի նախակրթարանի և եօթը՝ կրթարանի շրջան մը: Յետոյ ուսանողք եթէ յարմար դատուին՝ կը ղրկուին Վենետիկոյ Բարձրագոյն Վարժարանը և անկից Եւրոպայի արուեստից համալսարաններ:—Լեզուներէն կ'աւանդուին Թուրքերէն, Հայերէն, Գաղղիերէն (նաեւ խօսելուն պարտաւորիչ), Իտալերէն, Գերմաներէն, Անգլերէն —Ուսումնաց ծրագրին մէջ կան նաեւ ձայնական եւ գործիական երաժշտութիւն, մարմնամարզ եւ առողջաբանութիւն:—Վարժարանը ունի քսան ուսուցիչներ ներքին եւ արտաքին, Պոլսոյ կարողագոյն դասատուներէն ընտրուած:—Իր ծովահայեաց անհամեմատ դիրքէն զատ՝ չէնքին վրայ այս տարի կրեց կարեւոր փոփոխութիւններ՝ առողջապահութեան աւելի եւս նպաստելու համար:—Փափաքողաց կը ղրկուի Յայտագիրը:

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՏՈՒԾ ԹԱՅԿԻՆԱԿԸ

Թարգմանիչ. ՊԱՐԵՏ

Հեղինակ. ԽԱԼԻՏ ԶԻԱ ՊԵՅ

Երբ հիւսիսային հովը, սաստիկ հարուած-
ներով, ձիւնի կոյտերը լուսանցոյցներուն
մէջէն պատուհաններուն առջև կը դիզէր,
սենեակը տաքցնող երկար ձոյլ վառարանին
ջերմութեան հակառակ՝ դուրսը տիրող ցուր-
տին զգացմամբ ձեռքերը չփելով, ուսերը
վեր առնելով, Մէսուտ Խուրրէմ պէյ,—
ընկերներուն համար բանաստեղծական և սի-
րային յիշատակներովը նշանաւոր երիտասար-
դը—մէկէն կեցաւ։

—Ահա ճիշդ պարելու յատուկ գիշեր մը.
դուրսը, հիւսիսային հովի մը դիւային ներ-
դաշնակութեան տակ՝ ձիւներուն օդային
պարով մը թռչտած միջոցին, մերկ պարա-
նոցներու և թեւերու մէջ, բարակ սքարքին-
ներով, վալսի մը ալեծածան թռիչքին անձ-
նատուր ըլլալիք օդ մը, ըսաւ։

Այն գիշերը, ամենքնիս ալ մասնաւոր պա-
րահանդէսի մը հրաւիրուած էինք, բայց ա-
մենքնիս ալ կռնակնիս վառարանին տուած՝
հետզհետէ պատուհաններու մէջ խտացած
ձիւնախաւին յառած աչքերնիս, այս տաք
սենեակին մէջ ծուլօրէն նստիլը նախամեծար
համարած էինք։

Մէսուտ Խուրրէմ պէյ, ճկոյթին երկայն-
կեկ եղունգովը ծնօտին կարծր խարտեաշ
մօրուքը քերելով, աւելցուց։

—Եկէք ձեզի ասանկ ցուրտ գիշերի մը
յիշատակը պատմեմ։ Իմ պաշտօնով դուրս
երթալս ութը տարի եղաւ, կարծեմ։ Դպրո-
ցէն նոր ելած էինք, բոլոր ընկերներս մէյ
մէկ կողմ ցրուած էին, սակայն էն քաղաք-
ւոր վիճակը ինձի վերապահուած էր։ Ես ալ
Իզմիր կերթայի։ Իզմիր... այս բառը ան
միջապէս ներսս լաւ ազդեցութիւն մը առաջ
բերած էր, աչքերուս առջև երեւակայութեան
լուսաւոր հորիզոն մը բանալով։

Մէսուտ Խուրրէմ պէյ խօսքը յատկապէս
ինձի ուղղելով։

—Ձեր Իզմիրին չիք քաղաք մը ըլլալը
ամէն մարդ կը խոստովանի. ու միւս ուն-
կընդիրներուն դառնալով—կը ցաւիմ որ չէք
ճանչնար այս սիրուն քաղաքը։ Երկթեւեւան
լեռնէ մը գոյացած պլքոտ, քնքոյ գիւղի մը
մէջ սեղմուած է։ Քաղքին առջև, միշտ ա-
լեկոծ ու փրփրոտ ծոցովը՝ մայրամուտքը
ամէն իրիկուն պէսպէս սիրուն պատկերներ
գծելով, կարծես Քիի ճեմելավայրին դիմացը
հորիզոնի անկիւն մը կախած է, որ միշտ
այդ քաղաքը, յունիսի իրիկուան մը, ծա-
ղիկներու կենդանի դաշտի մը կը վերածէ ու
այլ ևս անկարելի կ'ըլլայ անջինջ սէր մը
չունենալ անոր վրայ։ Բայց ես, ոչ թէ յու-
նիսի, այլ յունուարի գիշերուան մը յիշատակը
պիտի պատմեմ ձեզի։

Իզմիր՝ ոչ այսպէս կռնակնիդ տալու ստիպ-
ուած, հանքածուխով լեցուն վառարաններ
ունի, ո՛չ ալ ակնածել չգիտցող հիւսիսային
հովի մը յարմարելով՝ տուններնուդ ամէն
կողմը թափանցող ձիւներ, Յունուարի դի-
շեր մը ըլլալը շատ շատ չոր՝ բայց մորթեր-
նիդ կճող ցուրտով մը կրնաք հասկնալ։
Ահա այսպէս, չոր ցուրտ գիշեր մըն էր որ
Քիին զարդը եղող այնչափ սիրուն շէնքե-
րէն մէկուն մէջ մասնաւոր պարահանդէսի
մը հրաւիրուած էի։ Սուրիոյ հարուստ-
ներու սերունդին պատկանելով, բաւական
ժամանակէ ի վեր Իզմիր հաստատուած այս
ընտանիքին Արաբիա բնակող քրիստոնեա-
ներու յատուկ արաբ անուանակոչութեամբ
մը, Ճէմիլէ և Ֆէրիտէ անունով, մէկը դեռ
նոր ա'ռանացած՝ միւսը չուտով ամուսնա-
նալիք, երկու աղուոր աղջիկ ունեցած ըլ-
լալը գիտէի։ Այսչափ բաւ էր։ Աղուոր
ըսելը, չեմ գիտեր Սուրիոյ յատուկ գեղեց-
կութիւնը կրնա՞յ հասկնալ։ Դոյն մը, որ
ո՛չ դեղին է, և ո՛չ եղէգնադոյն։ Կարծես
մորթի տակ կարմրութեան թեթեւ խաւ մը,

այդ գեղին գոյնը չափաւորուելու համար կոհակներով աչքը խարող վարդապետն շուք մը կը տարածէ: Կանոնաւոր կորութիւն մը ունեցող յօնքերը երբ մօտէն դիտուին, ցըրուած, դառաղ կերեւան և մաղերով լաւ մը չը ծածկուած տեղերը՝ դեռ լաւ մը չը կորսուած ծարիրի սեւութիւններ կ'ընդնը մարուին: Ընդհանրապէս ուղիղ, փայլուն, պղտիկ ակաւներու վերեւ, քիչ մը մստ, մարմնական զգայնութիւններ արտայայտող հաստիկ շրթուներ... վերջը գեղեցկութեան այս ամփոփոյքին նախագահող աչքեր... այո՛, կրնանք ըսել թէ այս սուրիական գեղեցկութեան հոգին բանաստեղծութեան ծուծը, աչքերն են: Աչքերը սեւ չեն, բայց պեւէն զատ ո՛չ մէկ գոյնի կը մօտենան. անփայլ՝ կարծես ներկուելէ վերջ սրբուած, փայլեցնելէ վերջ մրոտած, ինչպէս ըսեմ, բռնկելէ վերջ մարած աչքեր... մինչև ճերմակը իրենց սեւութեան շուքը տարածող՝ պղտոր ջուրի մը պէս, դէպի գաղտնեաց ստուերները հատցնող, լմնցնող ձգողութեամբ մը քաշող, տանող աչքեր: Եւ այս աչքերը կը նմանցնեմ այն երազներուն, որոնք իրենց դիւթող գրկին մէջ առնելէ ետք քեզ, անվերջ անկումով մը, դէպի բացարձակ պարապութիւն մը կը տանին... այն պիտի աչքեր, որոնց շուրջը կարծես թաւապատ—չփման և բաղխումի միջոցին կակղութենէ զատ ուրիշ բան մը չզգացնող—անդունդ մըն է: Այդ գիշերը ես՝ այս անդունդներուն մէջ քիչ մը իյնալու հաճոյքը կ'ուզէի վայելել:

Գացած միջոցիս, հանդէսի առթիւ այս չքեղ շէնքին ծաղիկներու և կերպասներու մէջ ծածկուած բոլոր մասերը, հրաւիրեալներով լեցուած էին: Մանաւանդ պարի յատուկ սրահին մէջ՝ պարահանդէսին բացումը կատարուելու վրայ էր:

Էն առաջ ձէմիլէն տեսայ, երկտր քղանցքով վարդապետն թաւիչէ հագուստով: Դիտուն վրայ, ճերմակ բրնձափոշիի մէջ թաթախուն մաղերուն վրայ՝ աղամանդէցունքի մը կապուած՝ տատանող, կարմիր փետուրովը, հո՛ն երիտասարդ ամուսնոյն

հպարտ նայուածքին տակ՝ երջանիկ Ժպտով մը այս գեղեցիկ թարմ կինը տեսայ: Առջի վախին բացումը անոնք պիտի կատարէին, բոլոր միւս զոյգերը հիմակ աչքերնին պատշգամբին մէջտեղ բռնած նուագածուներու ուղղած, սրահին շուրջը գոյնզգոյն հագուստներու մէջ տեսնուող ֆրաքներով կը կենային: Ինքնիրենս կ'ըսէի—ի՛նչ աղուոր տեսարան, հիմակ նուագի հով մը պիտի փչէ և բոլոր այս ծաղիկները պիտի ցրուին:

Եղբրքը տեղաւորուած զոյգ մը ճերմակ ճեռնոցներու պարապ մասները, անոսկր ճեռքի մը պէս օրորուող, գլակ—փեղոյր մը մէկէն օդը նետուելով, նուագածուներու նշան տուաւ: Այն ժամանակ, շատ յարգի եղող վալս մը, «Դանուբ», ալիքներուն նման ծփծփուն եղանակներովը, ջութակներու բամբ ձայներուն մէջ գլտորուիլ սկսաւ: Եւ եղբրքը կեցած—Այո՛, կուզեմ դիտել կ'ըսէի: Հիմայ բոլոր այս զոյգերը թուշու պատրաստուող աղաւնիներու նման օդ ելնելու նախապատրաստութիւն մը ունէին կարծես. «Հիմայ... հիմայ...» կ'ըսէի: Վերջապէս, անոնք, պարի մրրիկի մը մէջ զարհուրելի կալոբով մը, էրիկ կնիկ, զոյգ մը ծաղիկ երիտասարդութեան՝ մէկը կուրծքը լայնօրէն բաց բաճկոնակին տակ, ուռած, բանուած ճերմակ չապիկով և կռակն ի վար սիրուն ծածկումով մը երկարող ֆրաքովը, և միւսը, վարդապետն երկար քղանցքով թաւիչէ հագուստովը, արագ ու թռչտուն անցան: Ամէն մարդ, այս ամուսին շուրջը, դիտողներու և հիպոդոներու օղակ մը կազմելով, քիչ մըն ալ քաշուեր էին: Անոնք հեռացան:

Դիմացէն, վալսի ութը տասը հոսանքանման շրջաններով, հակառակ կողմը անցան, վերջը դարձեալ կալոբով մը վերէն վար սահելով, եկան ու կարծես ամբողջ հրաւիրեալները բարեւեցին:

Առջի պարին բացումը կատարուած եղաւ: Վերջը, մէկիկ մէկիկ, միւս զոյգերը շարժիլ սկսան, սրահին ամէն անկիւնէն մէյմէկ ալիք ելաւ, ողեւորուեցաւ, գլտորեցաւ. ահա «Դանուբ»ի ալիքները, գոյնզգոյն՝ երբեմն

ձերմակ և վարդապետ, երբեմն ալ կասույտ ու լեղակապոյն, գետ մը ալեկոծ և պարող ծիածան մը և այս ամէնուն մէջտեղ ձեռու-նէն կախուող ջահին տակ՝ անոնք...

Հիմակ, այս ջահին բիւրեղեայ կտորնե-րէն մազուելով թափուող լոյսի հոսանքին տակ, փայլակնանման յաջորդումով մը, խա-ւարող կիւմ երեւցող ամուսնոյն սև շուքը, զայն ինձմէ վայրկեան առ վայրկեան կը ծածկէր կոմ ոչ: Վերջէն այս հագուստին վարդ գոյնը, երեւակայութեան նայուածք-ներու տակ, երթալով մեծցաւ, սևը բոլո-լորովին կորսուեցաւ, ձէմիլէն միայն տեսայ վարդագոյն հագուստովը՝ գլխին աղամանգ-եայ ցցունքին վրայ տատանող կարմիր փե-տուրովը, ջահին երերուն շուքը վրան ցըր-ուած երկար քղանցքովը: Եւ «Դանուբ»ի ալիքները որոնք մէկ վայրկեան առաջ եղե-րի կորուսեան մէջ մտնելով, պզտիկ, հան-դարտ շրջաններով, խոխոջներով, հծծում-ներով կը քայլարուէին, մէկ վայրկեան վերջ պզտիկ պզտիկ ժայռերուն վրայէն ընդհատ յարձակումներով՝ ցատկելով, իյնալով, ել-նելով, հիմակ, հո՛ւ, երկու սիւններով յամ-րեմաց հոսանքի մը հանդարտ ներդաշնա-կութեան կը հետեւէին, ու պահ մը ետք, քիչ մը անդին, մրրկի մը բռնուած՝ եռալով փրփրելով, ժայթքելով, բոլոր այս գոյնըզ-գոյն ծաղկի ալիքները մէկտեղ քաշկրտելով կը վազէին, կը գլտորէին:

Ես բան մը չէի տեսներ, միայն այս շը-ջանակին մէջտեղէն բաժնուիլ չուզող շեմի-լէն կը դիտէի: Անոր գլուխը, հիմակ ամուս-նոյն ուսին յենած՝ աչքերը ջահին բարձրա-ցուցած, երջանկութեան երազին մէջ կը լողար: Այս ջահէն, ո՞վ գիտէ, երեւակա-յութեան ինչպիսի գոյներ կը տեղային. կա-պոյտներ, կանանչներ, դեղիններ, կարմիր-ներ... Լուսաւոր անձրեւ մը՝ ցնորական կեանքի մը անձրեւը: Այս քսան տարեկան, հազիւ երկու ամսու կնոջ վրայ, ոսկեղինիկ երազի մը լուսաւոր և գունաւոր երկինքը կը բացուէր: Ան՝ այս տեղատարափին տակ գինով, երջանիկ, երազանքով լի՝ գլխուն վրայէն պարպուող լոյսերուն տակ՝ աչքին

տակէն հոսող ներդաշնակութիւններով և գեղգեղումներով լի՝ «Դանուբ»ի ալիքներուն վրայ կը թռչտէր կարծես:

Դիտուն կարմիր փետուրին այնպէս իյնա-լով, ելնելով, սահելով, թռչելով, շարժումը՝ հասակին կքումներով, թափուող, հոսող, հա-լող կարծուած մէկ ներդաշնակութիւնը կար, որ աչքերու համար ստեղծուած երաժշտու-թիւն մը կրնար համարուիլ: Բայց երաժշտու-թեան սրտագրաւ ներդաշնակութիւնը մա-նաւանդ քղանցքին մէջն էր: Այս քղանց-քին, այս կարմիր թաւիչէ հագուստին երկա՛ր շատ երկար եղերքը, տակը քանի մը պատիկ լայն ժանեակներ, կտրատներ կարուած՝ երկար քղանցքին մէջն էր: Բոլոր կեանքիս մէջ աչքերուս մէջ պիտի դառնա, այդ քղանցքը: Ահա, տեսէ՛ք, դարձեալ զայն կը տեսնեմ, հիմայ, կամաց կամաց, բացուելով ու բաց-ուելով, կարծես շրջաններէն յոգնած՝ շարժ-ման կեդրոնը հանդարտած ալիքի մը նման կը տարածուի. խաղաղ և անկար, անշարժ և հանդարտ ալիք մը... մէկէն եռալու տենջ մը, ահա՛ կը հաւաքուի, կը դառնայ, հովի սաստիկ հարուածի մը տակ կը գալարի, հիմայ բորկացած ալիք մըն է ու ահա, պի-տի յորդի: Վերջը, այս պզտիկ ալիքին ե-ռացման ծայր տուող ուրախութեան թափով մը վարդագոյն թաւիչէ քղանցքը կ'եռար, կը տատանէր, վերջապէս ձերմակ փրփուր-ներ... Այս քղանցքը, որչափ երաժշտու-թեան իմաստնալի նշանակութիւն մը ունէր, երբեմն կարծես՝ նուազկոտ վիճակովը, սէ-րէն զարհուրած աղջիկ մը՝ որ ցիրուցան մա-ղերով և մերկ թեւերովը, սիրոյ անկողինը ինկած՝ կը տարածուի, և մերթ՝ ցանկու-թեան ջղային բարկութեամբ մը թեւերը պրկելով, յուսահատութեան տանջանքովը կը գալարի ու աւելի վերջ, անպատկառ քահ-քահներով, կը խնդայ ու մարգարտէ ակ-ռանները ցուցնելով քեզի «երջանիկ եմ... երջանիկ եմ...» կ'ըսէ: Ես ալ ինքնիրենս «Այո՛, երջանիկ եղիր ձէմիլէ, դո՛ւն և ջոյդդ, երկու քնիդ ալ, բոլոր ձեր միւս քոյ-րերով, բոլոր դեռատի աղջիկներով միասին, երջանիկ եղիք» ըսի: Վերջը, մէկէն ի մէկ,

յետին ալիք մը այս ծաղիկներուն վրայ վրիժուր մը ակոսեր էր ու ամէն ալ յոգնած՝ աչքերնին դարձած՝ չրթունքներնուն վրայ սառած մնացած ժպտով մը, ձգած միջոցին «Բայց Զէրիտէ՛ն, Զէրիտէ՛ն ո՛ւր է» ըսի:

Կարծես, այս ներքին հարցումը լսուած էր, պղտիկ ձայն մը արագական եւ ֆրանսական խառն արտասանութեամբ մը՝ պատասխանեց. — Մէսուտ Խուրրէ՛մ պէյ...

(Շարունակելի)

Ծանօթ դեղագործ Արիս էֆ. Ֆէսճեան, որուն Դեղարանին (Մահմուտ փաշայի գլուխը, աղբիւրին կից) ծանուցումը սկսած ենք հրատարակել, իր երկարամեայ փորձառութեամբը՝ նոր և կատարելագործեալ վիճակի մը մէջ դրած է զայն վերջերս: Ամէն տեսակ դեղերէ զատ, հոն կը գտնուին նաև թարմ պտուղատ, հանքային ջուրեր և այլն: Մեր Պոլսոյ կողմի ընթերցողներուն և մասնաւորապէս Շուկայի խանութպաններուն կը յանձնարարենք Ֆէսճեան դեղարանը որ գոհ կը թողու իր յաճախորդները ամէն տեսակէտով:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ՊԱՐՏԻՉԱԿ

25^{րդ} արեւելեան

Վարժարանը, իր 25ամեակին առիթով վերակազմուած նոր և լաւագոյն կարգադրութիւններով, կը բացուի Դ. օր. Սեպտ. 7ին (Ն.Տ.): Առեւտրական ուսումներ մեծ տեղ մը կը բռնեն բարեփոխեալ Ծրագիրին մէջ: Վարժարանին ուսմանց ընթացքը վեցամեայ է, 2 տարի նախապատրաստական և 4 տարի ալ Վարժարանական կարգերու համար: Ուսուցչական Մարմինը կը բաղկանայ հմուտ և փորձառու ուսուցիչներէ, որոնց հը գոյէճներու ընթացաւարտներ են, և 1ը համալսարանական մը: Առողջական տեսակէտով՝ Վարժարանին դիրքը անդուգական է: Իր յատուկ բժշկը մօտէն կը հսկէ աշակերտներուն առողջական վիճակին վրայ: Տնօրէնը և ուրիշ 4 գիշերօթիկ ուսուցիչներ, որոնք վարժարանին շէնքին մէջ կը բնակին, մօտէն կը հսկեն աշակերտներուն վարք ու բարքին վրայ: Վարժարանին տարեթուական է 16 օսմ. ոսկի, որուն կէսը

Սեպտ.ի սկիզբը վճարելի է, և միւս կէսը՝ Յունվ.ի վերջերս:

ԾԱՆՕԹ.—Կ. Պոլսէ եկող հին և նոր աշակերտները կրնան կէս գինով Հայտարար—Փաշայի երկաթուղիով Իզմիտ գալ, դիմելով մինչև Օգոստ. 18/3, Պայպըլ—Հաուս, Դրիւզոր էֆ. Շահպազեանի: Վարժարանին նոր այտագիրը ստանալու համար դիմել Մր. Ո.Ո. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս: 6—10

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, եւ. առաւօտ: Գիշերօթիկներու տարեթուական է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ.ի մէջ, և կէսը Յունուարի մէջ: Շաբաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օսմ. ոսկի և երկու դասի համար 5օսմ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1ուկէս ոսկի աւելի կը վճարեն:

Վարժարանին յայտագիրը ուղղողներուն ձրի կը շրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. էֆ. Գալալճեանի, ատենապետ խնամակալութեան, Ա. տաքաղար: 7—8

ՌՕՊԵՐԹ ԳՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 2/15ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար: Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարդի նոր և դեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ: 7—10

Հիմնադիր—Արսոնեսկր Կ. Ս. Իիթի-ձեմն Պատասխանատու—Տճօրեց ՏՈՒԹ. ԵԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԼԻՔ Օրագրի

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԼՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԿՈՍՏԱՆԴՆՈՐ ՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.
Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊՍՏՈՒՍԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒՒ ՏԷ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուի լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Իրամատկութիւնն է Ի Գ. Պոլիս, Քոնսթ Լիօնէ
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Իրասնեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56 8-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սննհնայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ՝

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱՌԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՐՏԱՐ

Չարչը Պոլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւեստարութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԵՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20-ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնական Ռեդեմպտիվ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԵՆԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՎԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿԱՐԿԱԾ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՇՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵՐԱԿԼԱՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագումար, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 *

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամագումար եւ վստասեց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ դանձուած ապահովագրին եւ տուցոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Դաւաթիւ, 7-10

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԹՅՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ ՈՐՈՒ ԿԵԱՆՔԻ, ՕԴԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՄԱՆ, ԲՈՇԱԿԻ ԵՒ ՈՒՂԵՒՈ

VICTORIA ՎԻԹՅՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւններ աւելի թէ՛
DE ԲԺՂԿԱԿԱՆ քննութեամբ եւ թէ՛ առանց ԲԺՂԿԱԿԱՆ քննութեան
BERLIN Առանց ԲԺՂԿԱԿԱՆ քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
ԲՈՒՆ ՎճԱՐԱՆՆԵՐԸ չաբաթական մասնավճարներով, աւելի կուենան,
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1902ից ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին աւ. ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ
այժմ ԵՂ ԲՐՈՎԱՐՏԱԿՈՎ ԵՒ ՈՒՂՈՂԱԿԻ Օսմ. Կայս Պանքա
կառավարութեան հսկողութեան ներքին եւ Բրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Պոլիս Քաբբեքոլու խան
թիւ 45 ԵՎ 45 Ե. 7-10

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Պատկերազարդ 1000 հաւելի հօքեր

բաղկացած
ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բառերու նորաբանութիւններ, զառաւելան բառեր հանրագրական հատումներ, երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրինագրութեան, ճարտարութեան, Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճախ եւ դիւրաւոր բառագրքի մը պէտքը ընդհանուր եղած էր ցարդ: Ահա այդ պէտքը լրացնելու հոգում է սոյն գործն, օգտուելով հայ եւ օտար բաղմաթիւ բառագրքերէ: Խնամքով հետազոտուած են բառերու ճշգրիտ նշանակութիւններն, անոնց որոշ եւ ամփոփ սահմաններն, իրենց հակադրութիւններով ու համադրութիւններով, ինչ ու նոր պէտքէն առումներով: Զանց չէ առնուած նաեւ դնել բառերու ծագումն, կենդանեաց, բուսոց ո՛ր

շատակարգութեան վերաբերիլը, ի հարկին անոնց թուրքերէն ու ֆրանսերէնէն եւս:

Բացի բուն բառագրքէն՝ գործոյս ամբողջ ընթացքին մէջ հանրագրական հատումներ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրէնագրութեան, ճարտարութեան, գործնական կենաց վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն: Թուղթ ազնիւ եւ սպազութիւն ընտիր եւ խնամեալ զարդարուած յատկապէս փարագրուած տիրուին եւ ճաշակաւոր պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրային քաջալերութեան արժանի սոյն գերագանցապէս օգտակար գործոյն համար, 20 դասեկան, Պոլսոյ, 25՝ զառաւոց, թղթատարի ծախուց համար եւ 6 ֆրանք օտար երկիրներու համար:

Հեղինակին հասցէն՝
Կ: Պոլիս, Հաճօբալօ խան, թիւ 24
8-10

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, որոնք ամբան եղանակին յարմարագոյն ըմպելին են:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիշին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէյալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ Գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս: 8-10



ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժաւն ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին իսկապառիկ գրանցներէն՝ 100ին 15 զեղչով: 8-10

ԳԵՂԱՐԱՆ

ԽԱՉԻԿՖԵՍՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մահմուտ փաշա Պաշի, Ապուտ էֆ. Խանին դէմ 261

Սոյն բաղամանայ դեղարանը, այս առիթով նոր կազմակերպութենէ մը կաջը, խաչիկ փէռնանի կողմանէ, ըիչ առնեալ մէջ պատիւը ունեցաւ զնոյն հասարակութենէն, որմէ քաջաբերելով պէտքը կըղգայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել հաւրութեան:

ՆՊԱՏԱԿ.—Գոհ ձգել իր յաճախողները միշտ՝ դեղերու թարմութեամբ, դեղագրեալու արագ եւ ճշդապահ պատրաստութեամբ, զնեյալ չափաւորութեամբ եւ արեւեալին խղճամիտ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—Մաքրութիւն, ապանեխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղաբանին սկզբունք կըլծեն:

Եւրոպական առն մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբաթ ապաւանտար թարմ քիւպիք (աթը գալիմի) կը հասնին բոսդայով: Բացի ասկէ, կը գտնուի օսմանեան եւ եւրոպական նոր եւ միշտ թարմ դեղեր եւ մանուշակներ, ի մէջ ալլաց Մալակայի եւ Պորտոյի դիւնիներ, տեղական եւ Եւրոպական ամէն տեսակ թարմ համալիւն ջուրեր, Գօլօնեայի եւ Բաքրամի ջուրերու ալ խառն անասկները եւ ալլըն, իսկ միջառասպան փօշիին ամէնէն աղ-դեցիկ անասկէն միշտ պատրաստ կը դառնուի:

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշենք մասնաւորաբար հանրածանօթ Բժիշկ ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ԷՖ.՝ որ ամէն Գլ. Ել. Շք. օրեր-ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանարանը, Դեղարանը ունի նաեւ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ 4—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիզի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն շահած է, այժմ հաստատուած է, Բերա Պէօլիւք Բարմաք Գարու, Թիւ 16, Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանց մէ դատ նորագոյն մեթոտներով կը բուժէ ջղային ու հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցումէ (hysterie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անդամալուծութիւն եւ կորկամուծութիւն եւ ալլըն: Ասկէ դատ, օտարի եւ օտարական խալը (օրրոնա), առանց գործողութեան՝ նոր դրութեամբ մը կը դարմանէ, տեղը առանց յայտնի ընելու Տոքթ. Էմիրզէ էֆ. կը գտնուի. Բերա Պէօլիւք Բարմաք Գարու, Թիւ 16 տան մէջ, ուր կիրակիէն դատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը.Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրբաթ օրերն ալ ձրիաբար ըկ դարմանէ հիւանդները:

8—10

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական վարժարանին, անդամ Բարիզի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարաններու հիւանդութեանց: Պատուով կայագիր ունի Պէրլինի, Լանտի, Բեշթայի եւ ուրիշ երկիրներու Ակադ. Դմիտիէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղի նախի մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը, կամուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրկուն, իսկ Բերա, Թաքսիմ, Ֆրանսական հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը.Ե.)

8—10